№ 69 Ապրիլի 23 (Մայիսի 5) 1882 Ապրիլի 23 (Մայիսի 5) № 69

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են խրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Սղնախից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Աւստրօ-Ունգարիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Զանգեզուրի գաւառը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Ապրիլի 19-ին

«Մշակի» անցեալ համարներից մէկի մէջ յայտնել էինք, թէ, Սղնախում երևացել է սկարլատին կոչված հիւանդութիւնը. թէև, այո, նա երևեցաւ քանի մի տեղ, բայց և շուտով էլ անյայտացաւ։ Այժմ երևացել է կարմրուկը, որ բաւականին տարածված է քաղաքումս և եկք էլ յաջող է։ Սըղնախը, առհասարակ, առողջութեան կէտից նայելով, բաւականին յաջող հանգամանքներ ունի։ Նա բլուրների վրա է կառուցած և շրջապատած է խորին ձորերով. անձրևը գալուն պէս՝ հեղեղներով լցրվում է ձորերը և այս իրողութիւնը բաւականին նպաստում է օդի մաքրութեանը և հիւանդութիւնների չքանալուն։ Բացի այս, սորա չորս կողմը զետեղված են գիւղերը իրանց դեղեցիկ այգիներով և խիտ անտառներով։ Սրա արևելեան կողմը տարածված է լայնածաւալ Ալազան գետի հովիտը իր ահագին սաղարթախիտ անտառով, որին վերևից, շատ վերևից խոժոռ դէմքով նայում է ալեոր Կովկասը։ Այս տեսարանը զարմանալի է և գեղեցիկ, նա մանաւանդ երբ արևի վերջին ճառագայթները զարդարում են յիշեալ վայրերը և ցոյց տալիս մեզ նորա հազարաւոր գաղտնիքը...

Սղնախի աչքի ընկնող պակասութիւնները սրանք են. չը կայ բանկ, չը կան լապտերներ, քաղաքիս զանազան մասերը դեռ ևս կեղտոտ են, եկողների համար վարձով տուն գտնելը դժուար է, տների ներքնայարկերը խոնաւ են, որովհետև տեղի դրութեանը նայելով տան յատակները դրսի հողի մակերևոյթից ցած են, քաղաքիս նոր ճանապարհը որքան անհրաժեշտ է՝ նոյնքան ցեխոտ է, գաւառիս մեծութեանը նայելով մի բժիշկը և մի դեղատունը քիչ է, ժողովրդեան քանակութեանը նայելով հայ քահանաների թիւը անտանելի շատ է, որին հետևում է նրանց չքաւորութիւնը։ Քաղաքը մտնելու ճանապարհը, որի վրա այնքան անհիմն ծախսերն են անում, դեռ չէ շինված. կարելի էր նոյն տեղ կառուցանել մի փառաւոր չուգուն կամուրջ, առանց որոյ անկարելի է թողնել նրան, որովհետև ձմեռ ժամանակը նա մի չումայ է անասունների համար։

Եղանակը շատ բարեխառն է, կարծես սեպտեմբերի օրն ևս ծծում։ Քաղաքն ու շրջակայքը ծառերի գոյնզգոյն ծաղիկներից սպիտակի ու կարմրի են տալիս. արևն ու ամպը, ամպն ու արևը միմեանց յաջորդելով անայցել չեն թողնում մեզ. եղանակը անգլիական է։

Բնութիւնից շատ ենք բաւական, միայն մեզ զայրացնում են բնութեան որդիքը որ ալրի պուդը ծախում են մեզ վրա 1—20 կոպ., մսի ֆ. 12 կ., իւղը 50 կ. իշով փայտի բեռը 40 կ., ածուխը մինչև 2 ր.։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Արծվանիք գիւղ, 3 ապրիլի

«Մշակի» № 47-ի առաջնորդող յօդուածը յայտնում է իրաւաբանութեան մասին մի կարծիք, որի հետ դժուար թէ կարելի լինի համաձայնվել։ Ահա այդ կարծիքը՝— «Իրաւաբանութիւնը մերժելով ճիշդ գիտութիւններից ընդունված մեթոդը, նայում է ամբոխի վրա ոչ թէ որպէս գիտողութեան ու հետազօտութեան արժանի հասարակութեան մի մասի վրա, այլ միայն որպէս կառավարվածների վրա, որոնք ենթարկվում են ոչ թէ յայտնի բնական օրէնքներին, այլ միմիայն դրված պետական օրէնքներին»։ Այդ պարբերութեան երկու մասն էլ, իմ կարծիքով, անժամանակակից և հակագիտական հակացողութիւններ են պարունակում։ Ճիշդ, բնական գիտութիւններից ընդունված մեթոդը բաղկանում է, անկասկած, փորձի և դիտողութեան մէջ։ Այստեղ ամեն մի պրինցիպ, ճշմարտութիւն, գաղափար ստացվում է փորձի և դիտողութեան միջոցով, ուրեմն, ինդուկտիւական ճանապարհով։ Մինթէ նոյն բանը չէ կատարվում և իրաւաբանական գիտութեան մէջ։ Վերցնենք ամենատարրական մի պրինցիպ, օրինակ, քրէական գիտութիւնից՝ խելագարները և բանականութիւնից զուրկ արարածները չեն կրող ենթարկվել պատժի իրանց գործածների վերաբերութեամբ, որովհետև նրանց յանցաւորութիւնը նրանց հասկանալի չէ։ Մինթէ այդ պարզ եզրակացութիւնը չէ ստացվել դարևոր փորձի և դիտողութեան միջոցով, այլ բուսել է գետնից։ Եթէ այդ հարցի մասին դրած դրված չը լինէր ինդուկտիւական մեթոդը, ներկայումս անշուշտ, միջնադարեան դատաւորների պէս, մենք էլ պէտք է դատէինք անասուններին, դեդուկտիւպէս դուրս բերելով դրա հարկաւորութիւնը այն հին, a priori դրված մտքից թէ՝ յանցաւորը պէտք է պատժվի։ Փիլիսոփայական ուղղութիւնը, որ տիրում էր իրաւագիտութեան մէջ դեռ ներկայ դարի սկզբում, ճշմարիտ է, ճիշտ գիտութիւններից ընդունված մեթոդը անտես էր առնում։ Հաստատելով, որ կայ մի յատիենական, տիեզերական (универсальная) արդարութիւն, նա ձգտում էր կազմել այնպիսի սիստեմներ, որոնք պէտքական լինէին ամենայն ժամանակի և հասարակութեան համար։ Այդ ձգտումը, զրկված լինելով գիտական հիմքից ի հարկէ չէր կարող երբէք իրագործվել։

Ներկայ դարի երեսներորդ թուականներում պատմական ուղղութեան գլուխ Ֆրիդրիխ Սավինյին յայտնեց այն միտքը թէ իրաւունքը—ժողովրդի կեանքի արդասիք է, ինչպէս նրա լեզուն և բարոյական հակացողութիւնները։ Աւելի լայն կերպով զարգացնելով այդ միտքը, պրոֆ. Ներինգը ցոյց տուեց այն ֆակտորները, որոնք կազմում են իրաւունքը. դրանք են՝ հասարակական պահանջ-

---

Հետքը տանելուց յետոյ բէկերի հետ վիճաբանել, կռիւ տալ և երբեմն դողացածը յետ ստանալ յանդգնում են դեռ թիւրք գիւղացիք և հայերիցը մի քանի հոգի միայն, որոնք յայտնի են գաւառում իրանց քաջութեամբ, իսկ հայ գիւղացին առհասարակ հետքը տանելուց յետոյ խընդիրքը ձեռքին լերդապատառ վազում է քննիչի մօտ։

—Վերև Աստուած, ներքև դու, եղս առ գողերից թէ չէ երեխերքս կը կոտորվեն—աղաչում է նա։

—Ինչու չը գնացիր ու չը խլեցիր զօռով, թշուառական։ Քո վիզը նրանից հաստ, կուրծքդ էլ լայն։

—Դէ աղա, գլխիդ մատաղ, ես ինչ գնամ։ Ըլելու բան ա—պատասխանում է հաստավիզ գիւղացին, բեղերը կէս դաղ կախ դցած։ Այդպիսով տարէց տարի, սերնդից սերունդ այդ ողորմելի, կրաւորական աշխարհայեցութեան ֆորմուլան «ըլելու բան չի» աւանդապէս կտակվում է յետագային և արմատանում ժողովրդի հակացողութեան մէջ։ Մնում է աւելացնել և կրօնական ընկճեցնող սպառնալիքը՝ ով սուր առնէ, սրով անկցէ— և պատրաստ են բոլոր պայմանները մի ճնշված և տրկահոգի ժողովուրդ պատրաստելու համար։ Զարմանալի չէ որ թիւրք տարը մկրտել է հային «Կօրխաղ էրմանի» անունով (վախկոտ հայ)։ Լսեցէք միայն այս փոքրիկ դէպքը և դուք կը համոզվէք այդ անուան հիմնաւորութեան մէջ։ Այս մարտի 10-ին տեղային քննիչի մօտ գալիս է մի խեղճ հայ գիւղացի արիւնոտ, ծեծված, ջարդված և յայտնում է որ Նօվրուզ-Բայրամին այս ինչ գիւղում թուրքերը առանց մի պատճառի հէնց ոտնի առիթով թափվեցին նրա վրա և լաւ ծեծեցին։

—Մենակ էիր—հարց է առաջարկվում։

—Զէ, մենք չորս հոգի էինք։

—Ո՞ւր են ընկերներդ։

—Երեքը չեն ուզում վկայ լինեն, որ գործի մէջ չընկնեն, իսկ չորրորդը դրսեը կանգնած է։

—Թող ներս գայ։

Սենեակը մտնում է մի հսկայ տղամարդ բոլորովին ուղտի կազմուածքով, կարմիր, առողջ—մի խօսքով մի փահլեվան։

—Ինչպէս տեսար դու սրան ծեծելիս։

—Ես զատ չեմ տեսել, աղա...ես փախայ, պատասխանում է փահլեվանը։

—Դու փախար!!

—Դէ ախար ինձ էլ կը ծեծէին—ինչ չը փախչէի։ Ծիծաղելի բայց շատ գեղեցկախօս անցք։

Ի հարկէ եթէ այսպիսի փահլեվանները փախչեն, վախենալով պաշտպանել իրանց սեփականութիւնը, ասպարէզը կը մնայ չը ցանող ու չը հնձող գիշատիչ թռչուններին—թուրք ու քուրդ ավազակութեանը։ Ինչպէս միջնադարեան ասպետների համար փառք ու պարծանք էր համարվում բաց արձակ աւազակութիւնը, նոյնպէս այստեղ մանաւանդ առաջվայ ժամանակները ամենահարուստ բէկն անգամ պէտք է արդարացնէր իր կոչումը գոնէ մի հովուից մի այծ խլելով։ Աւազակութիւնը և գողութիւնը—գլխաւորապէս ծառաների միջոցով—ազնուականութեանը յատուկ վարմունք էր համարվում։ Կանքի պայմանները դժուարանալով և զրկվելով ծառաներ պահելու միջոցներից, բէկը այժմ գողանում է ինքը անմիջապէս օգնութիւն ստանալով իր նմաններից։

Գող բէկերի սրտակից բարեկամները, գիտէք ովքեր են—հայ վաշխառուները։ Այս կամ այն թուրք գիւղում (հայ գիւղում նրանց հունձը առատ չէ կարող լինել) ապրում է քաղաքից եկած տոզացած վաշխառուն։ Նա ունենում է այդտեղ կրպակ, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի դիմակ՝—իբր թէ առուտուր է անում։ Իսկ նրա ուղիղ պարապմունքը բաղկանում է տոկոսով փող տալում գիւղացիներին, սարսափելի հրէշաւոր տոկոսով, մանաւանդ երբ նրանք վճարում են թաղաւորական հարկը։ Մարդասէր, բարեսիրտ ու բարենպատակ վաշխառուն օգնում է այդ ժամանակ գիւղացուն... այո օգնում է։ Այդ օգուտը մի քանի կոմբինացիաներից յետոյ ճուտերով նորից յետ է դառնում այնտեղ, որտեղից դուրս էր եկել՝ վաշխառուի գրպանը։ Բէկը և վաշխառուն բարեկամ են իրար հետ, որովհետև երկուսի գործունէութեան նպատակն էլ մէկ է և այդ նպատակին նրանք հասնում են զանազան միջոցով առանց մրցութեան։

Ս. Դ.

ներ և մարդկանց մտաւոր աշխատութիւնները գտնել միջոցներ այդ պահանջներին բաւականութիւն տալու համար: Ուրեմն հասարակական պահանջները այն կենտրոնն է, որի շուրջը պըտըտվում է ամբողջ իրաւաբանական գիտութիւնը: Այս վերջինի դեվիզն է՝ յարմարվել, զուգընթացաբար ընթանալ հասարակական պահանջների հետ: Այժմ կը տեսնենք որ այդ յարմարվելու համար անհրաժեշտ է ձեռնարկվել ինդուկտական մեթոդով: Փորձառու շկոլան (опытная школа) ապացուցանում է, որ սոցիալական գիտութիւնների մէջ նկատվում է նոյն բաժանումը, որ և բնական գիտութիւնների մէջ: Ամեն մի սոցիալական գիտութիւն բաղկանում է երկու մասից՝ մաքուր և գործադրական գիտութիւններից (чистая и прикладная наука): Նոյն բաժանումը նկատում ենք և իրաւաբանութեան, այն լայն գիտութեան մէջ, որ ամբողջապէս կանգնած է սոցիալական գիտութիւններից քաղուված հիմունքների վրա: Մաքուր գիտութեան դերն է գտնել հասարակական երևոյթները և դուրս բերել նրանց կառավարող օրէնքները,—իսկ գործադրականը ձգտում է կազմել այնպիսի սիստէմ ներկայի համար (ոչ թէ մշանջենական) որ հիմնված լինելով մաքուր գիտութիւնից առաջարկված օրէնքների վրա, ընդունակ լինէր բաւականութիւն տալու ներկայի պահանջներին: Մաքուր գիտութիւնը ֆիզիօլոգիական, հոգեբանական և այլն գիտութիւններից յետոյ դուրս բերեց՝ օրինակ, այն եզրակացութիւնը, որ մարդը հաւասար է մարդուն, որ ստրուկի աշխատանքը անտեսական տեսակէտից ձեռնտու է և ոչ օգտաւէտ (Ադամ Սմիթ)—և գործադրական գիտութիւնը, ստանալով դրական օրէնքի կերպարանք ոչնչացրեց ստրկութեան ինստիտուտը: Այժմ իրաւաբանութիւնը քաղուում է, որ մարդիկ ունեն հաւասար իրաւունքներ: Պարզ է այստեղից, որ այդ սկզբունքը իրաւաբանութեան մէջ ստացվել է ուղիղ ինդուկտական ճանապարհով: Գալով վերև բերած պարբերութեան երկրորդ մասին և ի նկատի ունենալով որ նրա մէջ գործ են ածվում «հասարակութիւն» և «ամբոխ» բառերը առաջինը ամբողջային, իսկ երկրորդը մասնային (частичный) մտքով—պէտք է եզրակացնել արդեն թէ իրաւաբանութիւնը հասարակութիւնը ուսումնասիրելիս հաւասար աչքով չէ նայում նրա դասակարգերի վրա, ամբոխը անտես է առնում: Ենթադրել իրաւաբանութեան մէջ—այդ վերացական հասկացողութեան մէջ—արիւտոկրատական ձգտումներ—չատ տարօրինակ կարծիք է այդ:

Ս. Դաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետևեալ համարում կը տպենք Կ. Պոլսի «Messenger» լրագրի մի յօդուած թիւրքաց Հայաստանում վերանորոգութիւնները մոցնելու համար նշանակված յանձնաժողովի մասին:

—

Ապրիլի 21-ին, չորեքշաբթի օր, պ. Արսէն Թօխմախեան կարդաց Արծրունու թատրոնում իր դասախօսութիւնը պարսկական Հայաստանի մի մասում արած իր ճանապարհորդութեան մասին:

—

Ընթերցողին արդէն յայտնի է որ ամեն կիրակի օր, ժամը վեցին երեկոյեան լինում են Թիֆլիսի ռուս հոգևոր սեմինարիայի եկեղեցում կրօնական խօսակցութիւններ և վիճաբանութիւններ: Նոյն տեսակ խօսակցութիւններ և վիճաբանութիւններ լինում են չորեքշաբթի երեկոներ մեր քաղաքի ռուս բապտիստների ժողովարանում: Այդտեղ ռուսաստան թէ աշխարհականները և թէ հոգևորականները վիճում են բապտիստների դէմ, ինչպէս այդ վերջինները իրանց կողմից, կիրակի օրերը, վիճում են ռուսաստանների դէմ:

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Պ. Պետրոսեանից նրա թարգմանած «Թուղթ խաղաղողի բաղդը» վերնագրով գրքոյկը, գործ Էրնստ Հօֆմանի: Տպված է Թիֆլիսում, Վարդանեանցի և ընկ. տպարանում, ներկայ 1882 թվին: Գինը 25 կոպէկ է:

—

Ապրիլի 18-ին, վիրակի օրը, օրիորդ Մարի Նուարդի բենեֆիսին ներկայացվեցաւ Արծրունու թատրոնում Գ. Սունդուկեանցի «Խաթաբալա» պիէսան, որ փոխադրված էր գրական լեզուի: Լեզուն, որին փոխադրված էր պիէսան, մենք չը հասկանալինք. նա մեզ ծանր և արուեստական երևաց:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են: «Այստեղի քաղաքային ուսումնարանի մի ուսուցիչ, կանխիկ վեր առնելով իր երեք ամսվայ ռոճիկը, անյայտացել է քաղաքից:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Գլադստօնի անուան հետ կապված է Անգլիայի ֆինանսական բարօրութեան դաշափարը և եկամուտների առաւելութիւնը ծախսերի վրա, որոնք թոյլ են տուել իւրաքանչիւր տարի պակասեցնել հարկերը, գրում է «Голосъ» լրագիրը: Բիւդժետային դեֆիցիտը անգլիացիներին նոյնքան անելեակայելի է համարվում հանձարաւոր ֆինանսիստի կառավարութեան ժամանակ, որքան նա բնական է լինում, երբ իշխանութիւնը անցնում է պահպանողականների ձեռքը: Մինչև այժմ Գլադստոն երբէք չէ խաբել նրա վրա դրած յոյսերը: 1873 թուականին Գլադստոն մի բիւդժետ ներկայացրեց, որ թոյլ տուեց բոլորովին ոչնչացնել ներկայ դարի սկզբից գոյութիւն ունեցող հարկը եկամուտների վրա: Այդ ժամանակ Անգլիայի ֆինանսները ամենափայլուն դրութեան մէջ էին:

1874 թուականի ընտրութիւններից յետոյ կառավարութիւնը պահպանողականների ձեռքն անցաւ և նրանք երկու կամ երեք տարիների ընթացքում հարուած հասցրին երկրի ֆինանսական դրութեանը: Պահպանողական մինիստրութեան գոյութեան երկրորդ տարվանից վերականգնվեցաւ եկամուտների վրա հարկը և այնուհետև մինչև Բիկոնսֆիլդի անկումը իւրաքանչիւր տարի անգլիական բիւդժետը դեֆիցիտ էր ներկայացնում: Երբ կառավարութիւնը նորից Գլադստոնի ձեռքն անցաւ, նա երկրի ֆինանսները սաստիկ խանգարված դտաւ և հերոսական միջոցներով միայն նրան աջողվեցաւ վերականգնել հաւասարակշռութիւն բիւդժետի մէջ. մինիստրութիւնը անյապաղ դադարեցրեց պատերազմական գործողութիւնները Աֆղանիստանի մէջ և խաղաղութիւն կապեց Տրանսվաալի ապստամբ բօէրների հետ:

Երկու տարի է, ինչ կառավարութիւնը պահպանողականներից անցել է ազատամիտներին և Գլադստոնի մինիստրութիւնը պարլամենտին մի բիւդժետ ներկայացրեց 305,000 ֆունտ ստերլինգ աւելորդով: Այդ հետևանքի հասել է Գլադստոն, չը նայելով, որ Իրլանդիայի պոլիցիայի ուժեղացնելու համար ծախսվում է 180,000 ֆունտ ստերլինգ, Կիպրոս կղզու վարչութիւնը պահանջում է 90,000 ֆունտ ստերլինգ: Այնուամենայնիւ Անգլիայի պետական պարտքը փոքրացրած է 7,150,000 ֆունտ ստերլինգով:

ԱԻՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Աւստրիան էլ ձեռնարկեց միջնակարգ ուսումնարանների վերանորոգութեանը, գրում է «Голосъ» լրագիրը: Ներկայումս Եւրոպայում չը կայ մի երկիր, որտեղ անհրաժեշտ չը համարվեր վերանորոգել ուսումնարանական հին ձևը, միջնակարգ կրթութիւնը յարմարեցնել ժամանակակից պահանջներին, ուսման ծանրութիւնը ուսանողների ֆիզիկական և մտաւորական թոյլ ոյժերի դահիճ չը դարձնել: Ֆրանսիան վերանորոգեց իր լիցէյների և ուսումնարանների նախագիծները, Պրուսիան կլասիկական կրթութիւնը մօտեցրեց բէալականին, իսկ Աւստրիան, որ մի քանի տարի է արդէն, որ միջոցներ էր փնտրում գիմնազիաների աշակերտներին անչափ պարապմունքներից ազատելու համար, այժմ ձեռնարկեց այդ վերանորոգութիւններին: Կոմ Տօլստոյի ձեռքով Ռուսաստան տեղափոխված պրուսական ուսումնարանական հին կազմակերպութիւնը անբաւարար է համարված ուսումնարանական տեսակէտից և վնասակար առողջապահական կողմից:

Ուսումնարանական աշխատանքների ծանրբեռը աշակերտների համար մանաւանդ հին լեզուների ճնշումը, որ ոչ մի լաւ հետևանքով չէ արդարանում, առիթ տուեցին աւստրիական գիմնազիաների վերանորոգման ձեռնարկելուն: Այդ հարցը բարձրացրած է դեռ 1878 թուականին և հէնց հետևեալ թուականին հարցաքննութիւնները թեթևացան: Այժմ այդ հարցը նոր ոյժ է ստացել և քննվում է մի մասնաժողովի մէջ, որ աշխատում է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ: Այդ մասնաժողովի աշխատանքները դեռ վերջացրած չեն և յայտնի չէ, թէ նրա մշակած վերանորոգութիւնը մինչև որ աստիճան կը տարածվի գիմնազիաների ուսումնարանական կազմակերպութեան վրա: Բայց աւստրիական կառավարութիւնը հարկաւոր համարեց յայտնել հասարակութեանը, որ ուսումնարանական վերանորոգութիւնը պատրաստվում է: Այդ նպատակով Վիէննայի պաշտօնական „Polit. Corresp.“ լրագրի մէջ երեք յօդուածներ են տպված, որոնք գլխաւորապէս նուիրված են մասնաժողովի անդամներին առաջարկած հարցերին աւստրիական գիմնազիաների կազմակերպութեան մասին:

Աւստրիական ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հարկաւոր չէ համարել արմատական վերանորոգութեան նախագիծ առաջարկել այլ կամենում է վերանորոգութեան համար իբրև հիմք ընդունել 1849 թուականի կանոնագրութիւնը գիմնազիական կազմակերպութեան մասին: Բայց մինիստրութիւնը հաւանական է գտնում, որ մասնաժողովի վիճաբանութիւնները առաջ կը բերեն կանոնագրութեան փոփոխութեան հարցը, և իր կողմից մտադիր չէ ընդդիմանալ այդ փոփոխութեանը, եթէ կը բացատրվի և կապացուցանվի նրա անհրաժեշտութիւնը: Ինչպէս երևում է, մինիստրութիւնը կատարեալ բարեխղճութեամբ վերաբերվեցաւ միջնակարգ ուսումնարանների վերակազմութեան մասին յայտնած բոլոր կարծիքներին, չը նայելով, որ այդ կարծիքները շատ անդամ արմատականապէս հակասում են իր նախագիծներին: Այդ իրողութիւնը պարզ երևում է «Polit. Corresp.“ լրագրի յօդուածից, որ ձգտում է ճշտութեամբ որոշել թէ ինչ են պահանջում աւստրիական ուսումնարանական ժամանակակից կազմակերպութեան զանազան քննիչները, և այդ պահանջներին մինիստրութիւնը կատարեալ անկողմնապահութեամբ է վերաբերվում:

Շատ հետաքրքիր է իմանալ, թէ Աւստրիայի մէջ ինչպէս են նայում գիմնազիական կրթութեան վրա և ի՞նչ հետևանքների են հանում այժմեան գիմնազիաներից անբաւական անձանց յայտնած կարծիքները այդ առարկայի մասին: „Polit. Corresp.“ լրագրի հաղորդութեան համեմատ, այդ կարծիքները չորս կարգի են բաժանվում:

Անբաւականների առաջին խումբը. գիմնազիաների գլխաւոր պակասութիւնը համարում է ենցիկլօպեդիական բազմագիտութիւնը, նրա անհիմն և առերես լինելը և առաջարկում է վերադառնալ նախկին լատինական շկոլային, գիմնազիաներին վեց դասատուններ յատկացնել և երեք տարի էլ փիլիսոփայութիւն աւանդել: Այդ խումբը կազմում են մանկավարժները, որոնք չեն խոստովանում ժամանակի պահանջները և կամենում են, եզուիտական ուսումնարաններ վերականգնելով, խեղդել ժամանակակից պահանջները և պատմութիւնը շեղել ուղիղ ճանապարհից:

Եզուիտական կլասիցիզմի այդ երկրպագուներին հակառակ մանկավարժների մի այլ խումբ օգտակար չէ համարում ոչ հին լեզուների աւանդելը ուսումնարանների մէջ և ոչ գիմնազիաների բաժանումը կլասիկականի և բէալականի: Այդ խումբը պահանջում է, որ ընդհանուր կրթութեան հիմունք կազմեն բնական գիտութիւնները և նոր լեզուները և որ հին լեզուների պարտաւորեցուցիչ լինելը գիմնազիաների մէջ բոլորովին սչնչացնվի:

Այդ երկու արմատականապէս միմեանց հակառակ խումբերին կից կան երկու չափաւոր կուսակցութիւններ, որոնցից մէկը, պահանջելով միատեսակ միջնակարգ ուսումնարաններ, աշխատում է միացնել բէալական կրթութիւնը չափաւոր կլասիկականի հետ, իսկ միւսը պնդում է, որ թէ կլասիկական և թէ բէալական ուսումնարանները զանազան ուղղութեամբ համապատասխանում են ժամանակակից կրթութեան պահանջներին և որ երկու ուղղութեան ուսումնարաններն էլ, իբրև գոյութեան հաւասար իրաւունքներ ունեցողներ, պէտք է պահպանվեն միասին:

Որովհետև անկարելի է այդպիսի բազմակողմանի պահանջներին համապատասխանող ուսման նախագիծ կազմել, աւստրիական լուսաւորութեան մինիստրութիւնը վրձռել է իբրև հիմունք ընդունել 1849 թուականի կանոնագրութիւնը, մոցնելով նրա մէջ անհրաժեշտ վերանորոգութիւնները:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 10 ապրիլի

Շատ անգամ կը մտածեմ թէ որչափ նիթեր կան որոց վրայ հարկ է գրել և չենք գրեր: Կրթական խնդիրներ, ընկերութիւնք, տնտեսական հարցեր, գեղեցիկ սեռի ձեռնարկութիւնք, պանդուխտներու դրութիւն, գրական շարժում, հայոց արուեստք ու արհեստք, աղգային ներքին շատ մը ուրիշ հարցեր, Ցանկա-Հայաստանի օր աւուր անցքերն ու վիճակ, ոչը թուեմ: Ասոնց ամենուն վրայ պէտք է սակայն գրել որպէս զի մեր վիճակն ամբողջութեամբ մը կարենանք ըմբռնել: Բայց ով ընէ: Իմ մասին եթէ ժամանակ իսկ գտնեմ «Մշակի» աւելի գրելու համար, չեմ ըներ, վախնալով թէ երբ կարդացողներն շատ անգամ գտնեն մի և նոյն անձի գրութիւնները կը ձանձրանան ու կը բարկանան: Ո՛րչափ անգամ փափագ յայտնած ենք որ զանազան ճիւղերու համար տարբեր թղթակիցներ գտնուին և այսպէսով մեր յարաբերութիւններն աւելի կը մշակուին, բայց փափաղներս միշտ փափաղ կը մնայ: Բայց խոստովանինք որ Ռուսաստանի հայերն ալ շատ ժրաջան չեն մեզ հետ յարաբերութիւններն շատցնելու: Այստեղի թերթերը քանի՞ թղթակից ունեն հոտկէ: Երբեմն երբեմն Թէրճեմանի-Էֆքեարի մէջ Տփղիսէն թղթակցութիւններ կը տեսնուին: Միայն պ. Շամշադրան է որ կանոնաւորապէս և ստէպ կը գրէ Պոլսոյ մի թերթի: Պ. Շամշադրամի գրութիւններն բաղմակողմանի են, շատ իրնդիրներ կը շօշափէ. թերևս ուրիշ առնն ունենանք յարուցած հարցերուն և իր գրութեան եղանակին վրայ աւելի խօսելու, հիմա սա ըսենք թէ գո՞ հրլլայինք եթէ իր հետևողներն շատնային:—Բայց նիթերն չը տեղինք. սկիզբէն սա կուզի ըսել թէ զանազան պատճառներ արգելք կելլան շատ անգամ, կարևոր նիթերու վրայ չուտով գրելու, նրա անհիմն և առերես լինելը և առաջարկում է վերադառնալ նախկին լատինական շկոլային, գիմնազիաներին վեց դասատուններ յատկացնել և երեք տարի էլ փիլիսոփայութիւն աւանդել: Այդ խումբը կազմում են մանկավարժները, որոնք չեն խոստովանում ժամանակի պահանջները և կամենում են, եզուիտական ուսումնարաններ վերականգնելով, խեղդել ժամանակակից պահանջները և պատմութիւնը շեղել ուղիղ ճանապարհից:

Եզուիտական կլասիցիզմի այդ երկրպագուներին հակառակ մանկավարժների մի այլ խումբ օգտակար չէ համարում ոչ հին լեզուների աւանդելը ուսումնարանների մէջ և ոչ գիմնազիաների բաժանումը կլասիկականի և բէալականի: Այդ խումբը պահանջում է, որ ընդհանուր կրթութեան հիմունք կազմեն բնական գիտութիւնները և նոր լեզուները և որ հին լեզուների պարտաւորեցուցիչ լինելը գիմնազիաների մէջ բոլորովին սչնչացնվի:

Այդ երկու արմատականապէս միմեանց հակառակ խումբերին կից կան երկու չափաւոր կուսակցութիւններ, որոնցից մէկը, պահանջելով միատեսակ միջնակարգ ուսումնարաններ, աշխատում է միացնել բէալական կրթութիւնը չափաւոր կլասիկականի հետ, իսկ միւսը պնդում է, որ թէ կլասիկական և թէ բէալական ուսումնարանները զանազան ուղղութեամբ համապատասխանում են ժամանակակից կրթութեան պահանջներին և որ երկու ուղղութեան ուսումնարաններն էլ, իբրև գոյութեան հաւասար իրաւունքներ ունեցողներ, պէտք է պահպանվեն միասին:

Որովհետև անկարելի է այդպիսի բազմակողմանի պահանջներին համապատասխանող ուսման նախագիծ կազմել, աւստրիական լուսաւորութեան մինիստրութիւնը վրձռել է իբրև հիմունք ընդունել 1849 թուականի կանոնագրութիւնը, մոցնելով նրա մէջ անհրաժեշտ վերանորոգութիւնները:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 10 ապրիլի

Շատ անգամ կը մտածեմ թէ որչափ նիթեր կան որոց վրայ հարկ է գրել և չենք գրեր: Կրթական խնդիրներ, ընկերութիւնք, տնտեսական հարցեր, գեղեցիկ սեռի ձեռնարկութիւնք, պանդուխտներու դրութիւն, գրական շարժում, հայոց արուեստք ու արհեստք, աղգային ներքին շատ մը ուրիշ հարցեր, Ցանկա-Հայաստանի օր աւուր անցքերն ու վիճակ, ոչը թուեմ: Ասոնց ամենուն վրայ պէտք է սակայն գրել որպէս զի մեր վիճակն ամբողջութեամբ մը կարենանք ըմբռնել: Բայց ով ընէ: Իմ մասին եթէ ժամանակ իսկ գտնեմ «Մշակի» աւելի գրելու համար, չեմ ըներ, վախնալով թէ երբ կարդացողներն շատ անգամ գտնեն մի և նոյն անձի գրութիւնները կը ձանձրանան ու կը բարկանան: Ո՛րչափ անգամ փափագ յայտնած ենք որ զանազան ճիւղերու համար տարբեր թղթակիցներ գտնուին և այսպէսով մեր յարաբերութիւններն աւելի կը մշակուին, բայց փափաղներս միշտ փափաղ կը մնայ: Բայց խոստովանինք որ Ռուսաստանի հայերն ալ շատ ժրաջան չեն մեզ հետ յարաբերութիւններն շատցնելու: Այստեղի թերթերը քանի՞ թղթակից ունեն հոտկէ: Երբեմն երբեմն Թէրճեմանի-Էֆքեարի մէջ Տփղիսէն թղթակցութիւններ կը տեսնուին: Միայն պ. Շամշադրան է որ կանոնաւորապէս և ստէպ կը գրէ Պոլսոյ մի թերթի: Պ. Շամշադրամի գրութիւններն բաղմակողմանի են, շատ իրնդիրներ կը շօշափէ. թերևս ուրիշ առնն ունենանք յարուցած հարցերուն և իր գրութեան եղանակին վրայ աւելի խօսելու, հիմա սա ըսենք թէ գո՞ հրլլայինք եթէ իր հետևողներն շատնային:—Բայց նիթերն չը տեղինք. սկիզբէն սա կուզի ըսել թէ զանազան պատճառներ արգելք կելլան շատ անգամ, կարևոր նիթերու վրայ չուտով գրելու

րելն և կը յետաձգվին: Ասոնց դասէն է այն տեսակցութիւններն զոր պ. Նիկողոսեան ունեցաւ Թրօթթր հաղարապետի հետ: Պ. Թրօթթր այն անձն է որուն կարծիքներն, համոզումներն, դատողութիւններն մեզի համար վերին աստիճանի կարևորութիւն ունին: Անգղիոյ պաշտօնական անձն ի Հայաստան իր տեղեկագիրներն մեծ կշիռ պիտի ունենան մեր երկրի ապագայ կազմակերպութեան մէջ: Շնորհակալ ըլլանք անոնց որ կրնան իրենց տեսակցութեանց մէջ, կամ իրենց գրութեամբ ներգործել հաղարապետի վրայ:

Պ. Նիկողոսեան երբ այցելեց պ. Թրօթթրի, իրեն ընկեր կունենայ պ. Ներսէս Իշխանեան, ձեր մի հայրենակիցն, որ իբր կամաւոր ծառայած է Լազարէֆի բանակի մէջ և իր ունեցած խաչերն իր վկայագիրներն են: Պ. Իշխանեան առոյգ երիտասարդ, բարեկազմ և բարեդէմ, իբր մի տիպար Ղարապաղի, լաւ տպաւորութիւն պիտի ընէր հաղարապետի վրայ, և ըրաւ ալ: Ինչ ընենք աղտոր մարմին մը միշտ պերճախօս եղած է:

Պ. Թրօթթրի և պ. Նիկողոսեանի տեսակցութիւններէն մին ձեզ պատմած եմ անցեալ տարի, այս անգամի խօսակցութեան գլխաւոր առարկայն Կովկասն է: Պ. Թրօթթր շատ հետաքրքիր ընդարձակ տեղեկութիւններ կուզէ տանալ Ռուսաստանի հայոց վիճակին վրայ և կուզէ հետաքրքրութիւն հանել թէ Ռուսաստանի հայք ինչ աղդեցութիւն պիտի կարենան ունենալ Թիւրքիոյ իրենց եղբարց վրայ: Որչափ ալ ըլլամիտ և դրական մարդ լինի պ. հաղարապետը սա յայտնի իրողութիւն է թէ՝ քաղաքական վարդապետութիւններն որոյմով իր երիտասարդութեան օրերուն մէջ մնած է, ըստ բաւականին նախապաշարեալ կընեն զինքն: Անշուշտ շատ դոհ պիտի լինէր պ. հաղարապետը եթէ պարագայներն հայկական խընդիր մը ծնած չըլլային:

Պ. Թրօթթրը ի մէջ այլոց կը հարցնէ թէ Ռուսաստանի մէջ քանի հազար հայ կան: Պ. Նիկողոսեան առանց այլայլելու մէկ ու կէս միլիոն, կը պատասխանէ: Երկու հայ զօրականները Կովկասի և Անդրկովկասի վրայ ընդարձակ տեղեկութիւններ կը հաղորդեն պ. Թրօթթրի մէկ ժամէն աւելի: Անդրկովկասու ամենէն բազմահայ նահանգներու վրայ խօսած ժամանակ պ. Նիկողոսեան կը յայտնէ թէ ամենէն աւելի հայաբնակներն են չորս նահանգ, Տփղիս, Երևան, Ելիզաւէթօրոլ, Բաղու: Բայց, կըսէ, Բաղուի մէջ հայերն համեմատաբար քիչ կը սեպուին, սակայն աղգային, կրօնական, պատմական աւանդութիւնը այդ պակասին տեղը առատօրէն կը լեցնեն:—Այս դիտողութիւնը թուի թէ շատ ախորժելի չեն եղած պ. հաղարապետին: Թէպէտ և Սկովոիացին միշտ զուրգուրանօք խօսի իր հինաւուց Սկովոիայ վրայ, սակայն հայուն ներելի պէտք չէ լինին այդպիսի զգացումներ: Քաղաքականութիւնը կը պահանջէ որ Թիւրքիոյ մէջ միայն նիւթական իրերու վրայ խօսուի երբ խնդիրը հայոց մասին է: Անոր համար է անշուշտ որ պ. Թրօթթր քմծիծաղ մը կունենայ երբ աղգային, կրօնական աւանդութիւնք բառը կը հնչուի հայու բերնէն:—Պ. Հաղարապետը կը յայտարարէ թէ Ռուսիոյ մէջ այրքան հայ լինելն չէր գիտէր և կը կարծեր թէ ինչպէս Թիւրքիոյ մէջ, նոյն և հոն մեծամասնութիւնը Թրքացն է:

Ասոնցմէ վերջ պ. Թրօթթր կուզէ իմանալ Ռուսիայի մէջ հայոց զինուորական վիճակի վրայ և անոնց թիւը որչափ ըլլալը: Պ. Իշխանեան կը յայտարարէ թէ 4000-ի չափ պաշտօնական կան, և թէ վերջի պատերազմի ժամանակ հայ կամաւորաց թիւը 400 անցած է: Հոս բաւական մանրամասն տեղեկութիւնք: Անդղիացի հաղարապետը չը հաւատալ չէր կարող, կենդանի օրինակն ապացոյց առջև ունէր:

Պ. Հաղարապետը կը հարցնէ նաև թէ որ դասուի հայերն ամենէն աւելի զինուորական յատկութիւններ ունեն:—Պ. Իշխանեան կը պատասխանէ թէ Ղարապաղ: Այս առթիւ ալ Ղարապաղի վրայ պէտք եղած տեղեկութիւններն կը հաղորդեն: Բասքեիչի ժամանակ պատահած դէպքերն, Ներսէս կաթողիկոսի զինուորական գործերն երբ կը լսէ հաղարապետը բաւականին աւելի կը ներգործուի: Պ. Առատամեանցի և պ. Մելիք-Փաշայեանցի կարծիքներն ալ իրենք արձագանքներն կը գտնեն մեր հայ զինուորականներու կողմէ պ. Թրօթթրի մօտ, երբ Ղարապաղի հայ կանայք խնդրոյ առարկայ կըլլան: Պ. Նիկողոսեան ընական է որ հայ կնոջ նպաստաւոր կարծեաց հակի օտարականին քով:

Յետոյ խօսքը կը դառնայ Թիւրքիոյ հայոց վրայ:—Պ. Հաղարապետը Ռուսիոյ հայոց վրայ ստացած տեղեկութիւններէն մտածմանց մէջ ընկղմած կերևի: Կը հարցնէ պ. Նիկողոսեանի թէ ինչ կը կարծէ որ Թիւրքիոյ հայերը պարտաւոր ըլլան ընել:

—Իրենց մտաւոր և տնտեսական զարգացմանը նուիրել բոլոր իրենց ոյժը:

—Ո՞րչափ ժամանակի մէջ կը կարծէք որ Թիւրքիոյ հայք կարենան ձեռք բերել ինչ որ կը փափագին:

—Յարատև աշխատութեամբ զրեթէ տասը տարուան մէջ:

—Այս առթիւ քաղաքակրթուելու համար հայոց ունեցած ընդունակութեան մասին կարծիքներ կը յայտնուին, որոյ առիթ կուտայ «Ժուրնալ դ'Օրիանի» մէջ պ. Արծրունիի երկու յօդուածներն:

—Դուք ալ կը մասնակցիք «Ժուրնալ դ'Օրիանի» այնպէս չէ՞, կը հարցնէ ծիծաղելով մը հաղարապետը:

—Այո՛, կը մասնակցիմ, ինչ կայ որ, միշտ ծիծաղով:

Այս միջոցիս ուրիշ հիւր կուգայ: Ալ այս նիւթի վրայ խօսակցութիւն չըլլար: Պ. Նիկողոսեանի և պ. Իշխանեանի մեկնելու միջոցին պ. Թրօթթր կը հարցնէ պ. Նիկողոսեանի:

—Ինչ բրիր ճակատամարտդ Պօլսոյ հայ թերթերուն դէմ, մտքդ ինչ էր:

—Ինչ, դուք ալ տեղեկացեր էք. նպատակն զիրենք աւելի շարժել էր Հայաստանի վերաբերեալ խնդրոց համար:

—Հրմ.—

Հիւրերը կը մեկնին, և մենք ալ մօտ ատեն նորէն կը խօսինք ուրիշ տեսակցութեան մը վրայ, նորէն այս պարտներու միջև:

Ոչ մի դեսպանական միջամտութիւն, ոչ պատրիարքական հրաժարական, ոչ աղգային վարչութեան երևակայութիւն, ոչ մի զօրութիւն կարող չեն Հայաստանի վիճակին մէջ բարեփոխութեան նշոյլ մը իսկ ցոյց տալ:—Հարստահարութեանց նկարագիրներն կը հասնին անդադար Կ. Պոլիս, և պօլսեցի հայն անզօր է բան մը ընելու: Կ. Պոլսոյ թերթերէն մին առջի օրը հրատարակեց թղթակցութիւն մը Հայաստանի մայրաքաղաքէն, Կարինէն:—Զարհուրելի կերպով խիստ են տագրնապական օրէնքները (!) բայց և այնպէս կառավարութիւնը ձայն չը կրցաւ հանել այդ թղթակցութեան նկատմամբ: Այդ թղթակցութեան կարևոր կէտերն կարտագրեմ, աւելցնելով թէ եղելութիւնն աւելի կառավարութեան ընթացքն է, որ ուշադրութիւնս պէտք է դրաւէ: Անհաւասիկ յիշած կէտերս:

«Մնացորդ տուլքերն հաւաքելու պաշտօնով մեր դաշտի այդ նշանակեալ Հինծիկ գիւղը կը հանդիպի մի ոստիկան՝ երկու զինուորական ըպայով, յորում 40 տուն Թիւրք բնակչաց մէջ միայն մի հայ գերդաստան կը գտնուի. հակառակ ամեն սովորութեան և արդարութեան՝ այդ երկու ոստիկանները հայ տան հիւր կը դրուին գիւղին մեծաւորաց կողմանէ. այս ոստիկանք ամեն տեսակ պատիւ և մեծարանք վայելելէն և իրենց պաշտօնով զբաղած միջոցին կը տեսնեն որ այդ հայու տանտիրոջ մի որդին՝ դեղադէմ պատանի մ'է, ուստի կը սիրպեն զայրն որ իրենց ենդջելու համար որոշուած սենեակին դուռ ելլէ, և իրեն փոխարէն իւր որդին ղրկէ իրենց սպասաւորելու: Հայրը առոյգ մի ծերունի, թերևս գուշակելով սոցա ամբարիշտ նպատակը, շատ կընդդիմանայ առարկելով թէ ինքը խիստ ժիր և զօրաւոր ըլլալով կրնայ իրենց ալ իրենց ձիերուն ալ սպասաւորութիւն՝ ուղուածէն աւելի կատարել. սակայն ոստիկանք մերթ ողողանօք, մերթ սպառնալեօք կը յաջողին համոզել զծերունին որ երթայ և իւր անկողնոյն մէջ քնանայ, իսկ որդին իւր տեղը փոխանորդէ ի ծառայութիւն իրենց:

«Կէս գիշերին անսովոր աղմուկ մը և յուզում մը կը տիրէ գիւղին մէջ, անօրինական պատանին անգթօրէն երկու ոստիկանաց կողմէն բռնաբարված միջոցին՝ այնպիսի ընդվզմունքիւն կը յուզնէ, այնպէս աղաղակ կը բառնայ որ գրացիները պահ մ'ետ համայն թիւրք գիւղացիք ոտքի վրայ կը գտնուին, ինչպէս նա և բռնաբարելոյն հայրը ծերունին և իւր տան մէջ անդամները. պատանւոյն զթութեան արժանի արիւնաթաթաւ վիճակը, պատահած իրողութեան համար վկայի և փաստի տեղիք չը թողլով. գիւղացիք եղելութեանը մասին տեղեկագիր մը կը խմբագրեն առժամայն և կը յանձնեն պատանւոյն հօրն, որպէս զի բարձրագոյն իշխանութեան դիմելով պատիժ և հատուցում պահանջէ, ստանայ և այլոց օրինակ լինի:»

Հայ թերթի թղթակիցը ասոնցմէ ետև կը յայտարարէ թէ տեղական կառավարութիւնը շատ դանդաղ է այդ մեղապարտ զաղաններն պատժելու. ամիս մ'անցաւ և ոչ ոք այլ ևս այս նիւթին վրայ կը խօսի:

Ուշադրութեան արժանի կէտն հոս է: Ամեն երկրի մէջ ոճրագործք կըլլան և ինչու համար եղած է իշխանութիւնը, ինչու ժողովուրդը տուրք կը վճարէ և կը կերակրէ այդ դատաւորաց բանակը, ոչ ապաքէն արդարութիւն հատուցանելու, ոճրագործին պատժելու: Եթէ դայս Թիւրքիոյ մէջ գործ դնէին ամեն ոճրագործաց նկատմամբ, ինչպէս այս պարագայիս մէջն ալ եթէ ընէին, ոչինչ ըսելու իրաւունք պիտի ունենայինք: Սակայն Թիւրքերը սոսկում կը տարածեն հայոց մէջ, ցոյց տալու թէ Եւրոպա ոչինչ կարող է իրենց ընել, թէ հայուն պատիւը, ստացուածքը, կեանքը ամենասրիկայ Թիւրքի մը հաճոյքէն կախում մը ունի: Շնորհք մ'է Թիւրքին կողմանէ եթէ թոյլ կուտայ հայուն ապրել, իսկ եթէ այդ շնորհքը չուզեր ընել և ոտքին ներքև կը ճզմէ զհայը, այդ իր իրաւունքն է, որուն համար ոչ ոք դիտողութիւն ընելու իրաւունք ունի: Եւ մենք այնչափ յիմար ենք, որ կը կարծենք թէ Թրքաց ոտքերը համբուրելով, շողոքորթիչ ածականներ տալով այդ դազանը պիտի կարենանք ընտելացնել:—

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Berl. Tagblatt» Հռոմից, ապրիլի 9-ին հաւանեալ մանրամասն հեռագիր ստացաւ: Կարդինալ Հոհէնլոէ այս օրերս մեծ ճաշ տուեց Տիվոլի իր կալուածքում ի պատիւ պրուսական Հենրիկոս իշխանի: Կարդինալը առաջարկեց Վիլհելմ կայսրի կենացը, որին իշխանը պատասխանեց պապի կենացն առաջարկելով: Այդ ճաշին ներկայ էին Տիվոլի եպիսկոպոսը, գերմանական դեսպանութեան առաջին խորհրդականը և պապի մօտ նոր նշանակված դեսպան Շլէօցէր: Վաղուց է, որ պրուսական իշխանը չէ առաջարկել պապի կենացը: Եւ դա ժամանակի նշանաբանն է:

—Լրագիրները հաղորդում են որ Թիւրքաց Հայաստանի մէջ վերանորոգութիւններն իրագործելու համար կազմված է սուլթանի հրամանով մի մասնաժողով և այդ մասնաժողովի նախագահ նշանակված է Սայիդ փաշա, Արխիպէլագոսի նախկին նահանգապետը:

—«Голосъ» լրագրին հաղորդում են որ Վանի նահանգի քիւրդերը պատրաստվում են յարձակում գործել Պարսկաստանի վրա, առաջնորդութեամբ Աբդէլ-Կադիրի, յայտնի շէյխ Իբադուլլահի որդու: Պարսիկները ամրացնում են իրանց երկրի սահմանները:

—Նոյն լրագրին հաղորդում են որ Պարսկաստանի Սուլ-Բուլաղի կողմերում յայտնվեցաւ մի առանձին հիւանդութիւն, որից բազմաթիւ անձինք մեռնում են:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հրդեհ Շվէրինի թատրոնում: Շվէրինի թատրոնի հրդեհի մասին Բերլինի լրագիրները հետևեալ մանրամասնութիւններն են հաղորդում: Թատրոնը բոլորովին լիքն էր: «Ռօբերտ և Բերտրամ կամ երկու դող» յայտնի պիէսայի երրորդ գործողութեան վերջում, վերին դատիկոններից լսվեցան «հրդեհ, այրվում ենք» աղաղակները: Անկարգութիւն սարսափ տիրեց հասարակութեան վրա, ամենքը միանգամից բարձրացան իրանց տեղերից և չտապով ուղղեցին իրանց քայլերը դէպի դռները: Երևի, բանը չէր վերջանայ առանց սարսափելի ճնշոցի, որին զոհ կերթային մի քանի մարդոց կեանքեր, եթէ պատեհ ժամանակին մեծ դուքս Ֆրիդրիխ Ֆրանցի բարձր և հրամայողական ձայնը չը լսվէր, որը մօտենալով իր օթեակի պատշգամբին, սկսեց հաւատացնել հասարակութեանը, որ նա կարող է դուրս գնալ թատրոնից չը շտապելով և չը ճնշոտելով միմեանց, և աւելի ևս համոզելու համար հրամայեց օրկէստրին վալս ածել: Խեղճ երաժիշտները սիրտը ամրացնելով հնազանդվեցան իրանց թագաւորի հրամանին, և հասարակութիւնը, մի փոքր հանդստացած լինելով մեծ դքսի խորհուրդներից, սկսեց առանց շտապելու դուրս գալ թատրոնից: Դերասանները բեմից սկսեցին հաւատացնել հասարակութեանը, որ թատրոնը ճշմարիտ այրվում է, բայց իրանց ներկայութիւնը բեմի վրա բաւականին ապացոյց է, որ մեծ վտանգ չը կայ: Հասարակութիւնը եօթ րոպէի ընթացքում օրինակելի կարգով դուրս եկաւ թատրոնից: Բոլոր դռները կընկի վրա բաց էին, ոչ ճնշոտց կար, ոչ չփոթ և ոչ աղմուկ: Միայն թատրոնից դուրս գալուց յետոյ, հրապարակի վրա, հասարակութիւնը նկատեց թէ որքան է տարածվել հրդեհը: Սկզբում բեմի գլխին գտնված վերնատունները այրվեցան, յետոյ կրակի զոհ դառաւ ամբողջ առաստաղը, իսկ թատրոնի դահլիճը մէկ և կէս ժամից յետոյ կրակի զոհ դարձաւ: Թատրոնը ազատել անկարելի էր, և այդ պատճառով եկող հրդեհաշէջները, հրդեհը կանգնեցնելու մի քանի անաջող փորձեր անելուց յետոյ, սկսեցին միայն հարևան տները պաշտպանել, մանաւանդ թանգարանը և մեծ դքսուհու պալատը: Այդ հրդեհին միայն մէկ հրդեհաշէջ զոհ գնաց, իսկ հասարակութիւնից ոչ ոք չը վնասվեց: Այրված թատրոնը կառուցվեցաւ 1835 թուին և նրա մէջ 1,100 տեղեր կային:

* * *

Սև հրէաները: Ամերիկական «Jewist World» լրագիրը հաղորդում է մի քանի հետաքրքիր մանրամասնութիւններ Հնդկաստանի սև հրէաների հասարակական և կրօնական սովորութիւնների մասին: Նրանց մեծամասնութիւնը Մալաբարեան ափի տեղացիներն են, ուր նրանց թիւը, մանաւանդ Կոչիմ քաղաքում, բաւական նշանաւոր է: Նրանց համարում են այն հրէաների սերունդները, որոնց Սոլոմոն թագաւորը Հնդկաստան ուղարկեց իրան համար փղեր բերել տալու և ոսկէ հանքերում աշխատեցնելու համար: Սև հրէաները ոչինչով չեն զանազանվում մնացած տեղացիներից: Հրէական լեզուն համարեա անյայտ է նրանց և նրանք իրանց գրուածներում և աղօթագրքերում գործ են ածում հնդկական լեզու: Նրանք էլ ունեն աստուածաշնչի նման մի բան, բայց ոչ թէ տպված, այլ գրված: Կրօնական տօներից նրանք պահպանել են միայն շաբաթը և զատիկը, մաքրվելու օրը նրանց բոլորովին անյայտ է: Իրանց կերակուրը պատրաստելու մէջ նրանք նոյնպէս ջոկվում են ուրիշ հրէաներից, որովհետև նրանց սկզբնական բարքերը և ծէսերը սաստիկ փոխվել են իրանց հաւատակիցներից երեք հազար տարի բաժանված լինելու պատճառով: Նրանք մինչև անգամ սպիտակ հրէաներին էլ ջոկ են ապրում, որովհետև վերջինները չեն համարում նրանց հրէական ցեղի իսկական սերունդներ: Իսկ սև հրէաները պարծենում են իրանց արտօնական թղթերով, որ ստացել են հնդկական թագաւորներից, օրինակ, Զանդրակունտ թագաւորից, որը ապրում էր Ալէքսանդր Մեծի ժամանակներում: Իրանք հրէաներ չեն անուանում իրանց, այլ «Իսրայէլի որդիք» և հաստատում են, որ իրանք պատրիարքների գրած բազմաթիւ սրբազան գրքեր ունեն: Բայց շատ աղքատութեան մէջ են ապրում, շատ ազէտ են և իրանց մնունդը հայթայթում են դաշտային աշխատանքներով և արհեստներով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 ապրիլի: „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է. խորհուրդը հսկողութեան ենթարկվածների մասին ենթադրում է վերջացնել հսկողութեան ենթարկվածների նախկին գործերը ամառվայ ընթացքում: Արդէն քննված են 1509 գործեր, ազատված են 990 անձինք, հսկողութեան տակ թողված են երեք տարուց ոչ աւելի ժամանակով 354 անձինք, աւելի երկար ժամանակով 165 անձինք: Ապրիլի 19-ին հասաւ Ս. Պետերբուրգ Դանենդաուեր իր ընկերների հետ և ընդունվեցաւ Կայսրից և Կայսրուհուց: Ուղևորվելու է ապրելի 22-ին: Երկկ հասաւ Ս. Պետերբուրգ բոլգարական իշխան Ալէքսանդր: Այստեղ կը մնայ մօտ երկու շաբաթ և յետոյ կուղևորվի Դարմշտատ:

ԼՕՆԴՕՆ, 21 ապրիլի: Պարնել, Դիլօն և Օկոնել արձակված են բանտից: Կառավարութիւնը վճռել է այսուհետև հաշտ քաղաքականութեանը հետևել Իրլանդիայի մէջ: Ֆօրսատեր հրաժարական տուեց:

Կ. ՊՕԼԻՍ, 21 ապրիլի: Սայիդ-փաշա արձակված է պաշտօնից, նրան կը փոխարինէ Բաղդադի նահանգապետ Աբդուրահմանփաշա:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախկին ԽԱԼԻՊԵԱՆ ուսումնարանի աշակերտները պատիւ ունեն խնդրելու, ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆԻ յիշատակը յարգողներին, շնորհ բերել կիրակի, ապրիլի 25-ին, առաւօտեան 11 ժամին, Վանքի մայր եկեղեցին, ուր կատարվելու է նորա հոգեհանգիստը։

2—3

ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

Էլնստ Հօֆմանի „ԹՈՒՂԹ ԽԱՂԱՑՈՂԻ ԲԱՂԴԸ“ վերնագրով գրքույկի հայ թարգմանութիւնը։ Թիֆլիսում ծախվում է „կենտրօնական“ և „Կովկասեան“ գրավաճառանոցում, իսկ Երևանում „Բարեկամ մանկանց“ գրավաճ. պ. Սիմէօնեանցի մօտ։

Գինն է 25 կօպ.

2—5

ՄՈՒՐԱՒԲԱ, շաքարի ձուաներ, պանիր-չեստեր, խաւիար և այլն։ Ծախվում են շատ էժան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ

Նոյն տեղ ծախվում են. բազկաթոռ-մահճակալ 8 ր., ամբողջ **ՀԱԳՈՒՍՏ** 12 ր., չը թրջող վերարկուներ 6—18 ր. և մեծ քանակութեամբ **ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ**, դանակներ և այլն։

2—10

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Մեր տպարանից, հետևեալ մեր թարգմանութիւնը

„ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾ ՍԿԻՒՌ“

Փոքրիկ պատմութիւն երեխայից համար։ Ամենափոքրիկ դիրքով, և մաքուր տպագրութիւն։

Տպած է Մանուշակի գունով։

Գինն է 10 կ. 10 օր. պակաս չէ ուղարկվում։

Հասցէն՝ Въ Эривань
А. С. Гуламирянцъ.

3—5

Ապրիլի 15-ից կենտրօնական գրադարանում, որ գտնվում է Արծրունու գալլերէի № № 149 և 150 բացված է հայերէն գրքերի բաժանումը։ Ամսական վճարը մի գրքի համար 30 կ., երկու գրքի համար 50 կ., իսկ երեք գրքի համար 80 կ.։

Գրաբար պէտք է թողնեն 2, 3 կամ 5 ռուբլի, նայած քանի գիրք է սանում։

Գրադարանը բաց է ամեն օր առաւօտեան 8 ժ. մինչև երեկոյեան 8 ժամը։

4—10

ՎԻԵՆՆԱՅԻ ԱԹՈՌՆԵՐ

36 ՌՈՒԲԼ

եվ. Ծատուրեանցի գէպքում

18—20

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արծրունու գալլերէում, № 144 ԽԱՒԱՐՈՒՄ է արժան դնել հանրութեան ուշադրութեան տակ Մանկական զանազան ապրանքներ, դեղագործական ապրանքներ և շրջանակներ։

26—60

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՄԻ ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ

Ցանկանում է դասեր տալ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ և ՖՐԱՆՍԵՐԷՆ լեզուներից և նոյնպէս ընդհանուր ուսումնարանական առարկաներից։

ՊԱՅՄԱՆՆԵՐԻ մասին դիմել „ՄՇԱԿԻ“ խմբագրութեանը։

8—10

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

REDACTEUR EN CHEF F. Salles.

1. Weihburggasse 9. (Vienne)

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., շամդաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարտներ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ըէվոլվերի, սիգար Ռէնդարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էյնէմի. կօֆէ էյնէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոներ սամովարի և չայու, դանակ չանգալ դանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօրմիս կտրելու մաշինայ. Անգլիական ուլթուներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեսախատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուսմիչկէք 45 կ.—5 ր., շամդաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, չչոտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусь) ֆէչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՐՈՒԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

36—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապոն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրանները 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարանները 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ծրծիչներ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր., շչէօտկա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, արիկօ, ԱԼԲՕՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՑ։

21—50

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ ԲԱՖՖԻ

ԴԱՒԻԹ ԲԷԿԻ

III ԳԻՐՔԸ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼ

Վէպի այս հատորի մենավաճառութիւնը պատկանում է բացառապէս Թիֆլիսի «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՆ»։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ“ (на Головинскомъ проспектѣ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

6—10

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Գոլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

1,000 հատ երկաթեայ ԱՆԿՈՂԻՆՆԵՐ նոր են ստացվել և ծախվում են 10 ռուբլուց մինչև 25 ռուբլ հատը և նոյնպէս զոյգերի համար անկողիններ 20 ռուբլուց ըսկսած

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Նոյնտեղ ՎԱՃԱՌՈՒՄՆ պանրի, մուրաբայի, կոնֆէկտների, զգեստների, վերարկուների, կրագների և 500 բէվօլվէրների։

4—6

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ

Որ մայիս ամսի կէսից մինչև ամառվայ վերջը բնակվելու է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, յանձն է առնում ՊԱՐԱՊԵԼ թէ կրկնութեամբ և թէ դասերով զանազան ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ և թէ փոքր երեխաների հետ։

Մանրամասն ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, այսինքն՝ ո՞ւմ և ի՞նչ հասակի երեխայի հետ պէտք է պարապել, ի՞նչ առարկաներից, ո՞ւրքան ժամ և այլն և այլն խնդրում են ցանկացողներին թողնել „Մշակի“ խմբագրատան մէջ, ուր կարող են գտնել և յիշեալ ուսանողի հասցէն։

11—15

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Апрѣля 1882 года.

Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.